



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## Ե Զ Ն Ի Կ Ի Ե Ղ Ծ Ա Ղ Ա Ն Գ Ո Ց Ի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՀԱՅԵՄԲԵՐՍՈՒԹԻՒՆ ԵՎ ՓՆԵՆՈՒԹԻՒՆ

Եղեկի «Եղծ ազանդոց» ի նորագոյն հրատարակութեան՝ ընթացքին աչքի առջև ունէինք Չմիւնիոյ 1762ի տպագրութիւնն և Աճառեան-Գ. Տէր Մկրտչեանի կազմած «Քննութիւն և համեմատութիւն Եղեկայ նորագիւտ ձեռագրին»։ Չանց ընելով ուսումնասիրութիւններ՝ որոնք ուղղակի Եղեկի գործին ցննադատութիւն կամ աւոր ազդիւրներու պրպտում էին, յատկապէս ցննեցինք յարակից այն աշխատուածիւնները որոնք մեզի ձեռնտու կրնային

ըլլալ «Եղծ ազանդոց» ի ընագրին վերականգնումին առաղծ հայթայթելու։

Ընդհանրապէս փորձած են Եղեկի գործին ընագրիւր սրբագրել ցերականական, լեզուական, և երբեմն իմաստի տեսակէտով՝ թողնեան՝ Նորայր՝, Գարագաշ և Գուրգէն՝ շատ համառօտակի։ Աճառեան յիշեալ գործին մէջ, Հ. Գ. Գալէմբեարեան իր ուսումնասիրութեանց ընթացքին՝, Հ. Գ. Վ. Նա. հապետեան՝, Բարգէն Մրրագան՝ և վերջին տարիներու Mariès ֆրանս. քահանան՝,

1. Վանեթի. 1926.

2. Վանեթ. 1904. 110 էջ.

3. Ինչպէս են Հ. Գալէմ. Վ. Թորոսեանի հոռու և զիտատար յղումները. տէս Բզմվ. 1889-90, Հ. Գ. Գալէմբեարեանի, Հանգէս Ամ. 1898-4, 1896. Mariès, Revue des études arméniennes հա. Խ. էջ 1925. Պրոֆ. Ն. Աշոտի, Vetter, Meillet, Veber, Տաշեանի, են են.։

4. Հատընտիր ընթերցումք ի մասնագրութեանց



Նախնաց. Բ. ազ. Վանեթ, 1891, Ա. Եղեկի Կող. բացի՝ Ընդդմ ազանդոց 1-65 (Կողմեր ընտրանք)։

5. Հայկական բառացնութիւն. ազ. Կ. Պ. 1880.

6. Հաշակ Ոսկեղնի Գրութեան հա. Ա-Բ. Կ. Պ. 1887-1889.

7. Ուղղագրութիւնք ազգային մասնագրաց (հանուած Բազմավեղն). Վանեթի. 1907-8. էջ 431.

8. Եղեկի (մանր զիտողութիւններ). Հանգէս Ամսօր. եայ. 1907. էջ 310.



դարձակ Հ. Գ. Վ. Նահապետեան<sup>1</sup>, հուակ Պրոֆ. Ն. Աղոնց<sup>2</sup>։

Կը խոստովանինք որ այս հեղինակներուն ոչ ամէն սրբազրութիւնները նոյն ոյժն է նոյն համոզիչ փաստերն ունին. թէ և երբեմն շատ հաւանական, սակայն միշտ ենթակայական կը մնան, քանի որ ձեռագրական հեղինակութիւնը կը պակսի։ Հետեւաբար չէինք կրնար յախուռն կերպով ներմուծել՝ փոփոխելով մեր Վենետեկան - Բագրատունեան նախկին տպագրութիւնը (1826)։ հազիւ տասնհինգի կը հասնին մեր կատարած սրբազրութիւնները, որոնցմէ մաս մը գրաշարի վրիպակ էր արդէն. Ձեռագրածն զգուշութեամբ առինք Աճառեանէն՝ յեցած իր ձեռագրի հեղինակութեան և բաղդատական ապացոյցներուն։ Թէ որոնք են աստեղ՝ պիտի տեսնենք յօդուածիս համեմատութեանց ընթացքին։

Մեր յօդուածին նպատակը, ինչպէս վերնականարկեցինք, Եզնիկի բնագրին վերականգնումին համար նիւթ հայթայթել է բանասէրներուն, և այս դիտումն ունեցանք երբ հարեանցի բաղդատութիւն մ'ընելով Ձմիւռնիոյ և Վենետեկան տպագրութեան և Աճառեան - Տէր Մկրտչեան նորագիտ ձեռագրին, տեսանք որ բազմաթիւ կարեւոր և երբեմն էական տարբերութիւններ կան, յաւելումներ, յապակումներ, փոփոխութիւններ, մեկնութիւններ անգամ. որով հարկն զգացինք ուսումնասէրներուն ներկայացնել այդ համեմատութիւնները որոնց մէջ իսկապէս հետաքրքրական կէտեր կան։ Բաց աստի կարեւոր կէտ մը ձեռագրի խընդրայ մասին. այսինքն, արդեօք Աճառեան - Տէր Մկրտչեան նորագիտ ձեռագիրն է որ բնագիր ծառայած է Ձմիւռնեան - Վենետեկան տպագրութեանց, թէ ուրիշ մը։

Խնդիրն այնքան պարզ չէ. վասն զի թէ և Բագրատունի վենետեկան տպագրութեան յառաջաբանին մէջ կ'ականարկէ Զեթ թուականով ձեռագիր մը՝ որմէ զաղափարուած է Նախ Ձմիւռնեանը և ասկէ ալ Վենետեկանը, սակայն Աճառեանի հրատարակութեան կը տեղեկանանք որ նորագիտ ձեռագրին ալ Զեթ թուականը կը կրէ։

Դժուար չէ ըսել, ինչպէս մեր համեմատութիւններէն ալ արդէն պիտի յայտնուի, թէ երկուքին ալ նշանակած նոյն թուակիր Զեթ ձեռագիրները տարբեր օրինակներ են և իրենց կարգին տարբեր խումբէ կամ օրինակներէ հոսք եկած են։

Նախ հարկ է որ հոս ամփոփենք մեր համեմատութեան երբեակ եզրներու պատմականը, քանի որ անկէջ կը կախուի իրենց հեղինակութիւնն և իրական արժէքը։ Հինբրէն կարծեմ ոմանք և վերջերս Mariès<sup>3</sup> մինչ ցաւ կը յայտնեն Եզնիկի ձեռագրական անբախտութեան, միանգամայն կ'աւաղեն զայն թէ յորդոյն ձախորդարեան հանդիպած է տպագրութեան տեսակէտով, քանի որ Ձմիւռնեանը սխալագրութեամբ, աղճատութեամբ լի է, Վենետեկանն ալ աղաւաղուած, ուղղուած ըստ կամ՝ Բագրատունիէն։

Ասկայն շատ յանդուգն է անարդար է անոնց կտրած դատավճիռը. կը համարիմ որ լիովին տեղեկ չեն Բագրատունի կատարած դերին այդ տպագրութեան մէջ։

Ձմիւռնեանը, ստոյգ է, բազմաթիւ տգիտական, քմահաճոյ են փոփոխութիւններ ունի, ինչպէս յայտնի պիտի ըլլայ մեր հետագայ համեմատութեանէն, թէ և հրատարակիչ, Յակոբ<sup>4</sup> Նալեան Պատրիարք կ. Պոսի, մեզ բռն թէ «ի գրչասխարութեանց ամենեկին յապաւանալ»։ Ասչափն յայտնի

1. Եզնիկայ կողացույ՝ Եզնիկ պաշտօն. Բզմկ. 1925 էջ 162-166.

2. Քննական նշմարներ Եզնիկի մասին. Բզմկ. 1925. էջ 196, 294, 386, և 1926, էջ 12, 69, 108.

3. Տե՛ս Բզմկ. 1925, էջ 164.

4. Մեզ հասկնալի չեղաւ թէ ինչպէս Պրոֆ Ն. Աղոնց պետած է Աբրահամ Վ. (Արքեպ. Ձմիւռնիոյ) դեռ լավ էր հրատարակել (Տե՛ս Բզմկ. 1925 էջ 198-199),

մինչդեռ թէ՛ զրբն ձեռնէ «կ. Պոսի (պատրիարքութեան) Տեան Յակոբայ Աստուածաբան Վ. ի որոյ հրամանան և սրբազրութեամբ ուղեցաւ», թէ՛ Յառաջաբանէ «Տեան Յակոբայ Աստուածաբան Վ. ի և Պատրիարք կ. Պոսի, առ սերելի և աստուածաբան ընթերցող» Յակոբ է. զրբն ձեռնին կայ Աբրահամ անուն ալ, բայց իրեն բարեբար տպագրութեան. «Արքեպ. Նաւանդուս դիտի (Ձմիւռնիոյ Արքեպ.) Տեան

է սակայն որ ուղղագրութեան մէջ՝ Ահա-  
ռեան — Տէր Մկրտչեան նոր ձեռագրէն  
ընտրել է Զմիւռնեանը:

Տպագրութեան պատմականն որոշ է  
նոյն զոքի յառաջարանէն և վերջարանէն:  
«Արբանամ վ. զօրինակ զըրոյս ի ձեռն  
բերեալ ունեւով, ըստ գրասէր բարոյցն  
իւրոց ցանկացուս տպագրութեամբ ի լոյս  
ածել զսա... ս. գիրքս ոչ այնքան զոյր տա-  
րածեալ յազգի մերում, բայց եթէ զանունն  
միայն լսեալ. զոր և գերամեծար Պատրի-  
արեան է. Պոլսոյ Յակօր Աստուածաբան վ.  
ի տեսանելն, աստմանայ կաթողին սիրով  
յարեալ՝ ոչ սակաւ կրեաց աշխատանքս ի  
վերայ սորին յի յապտելն ի սղայանաց  
և թէ ի զանազան պրակս բաժանելն զհա-  
ռակերպ ասացութեան սրբոյ հեղինակին,  
որ և միանգամայն հրամայեալ զի տպա-  
գրիցի »: Նոյն բանն արդէն յառաջարա-  
նին մէջ ըսած է տպագրիչն ինքը, Յակօր  
Նալեան Պատրիարք, թէ « ի գրչասխա-  
լութեանցն ամենեկն յապաւեալ. և զեր-  
կար ճառակերպ գրեալսն, ըստ զանա-  
զանիցն պարբերութեանց իմացութեոց ի  
գլուխս 76 բաժանեցի, զի ընթերցողացն  
բարձրի ձանձրութիւն. և հրաման ետու ար-  
պագրեցման, Յակօր և եթ պաշտօնեայ...  
յաւի Տեառն 1762 և յուլիսի 10... »:

Յայտնի է որ ամէնէն կարևոր գիտե-  
լիքը կը պակսի, այսինքն ձեռագիր բնա-  
գրի յիշատակը ունիցող տպուած է, անոր  
թուականն ու միւս բոլոր հանգամանքները:  
Բարեբախտաբար Հ. Մկրտիչ Ազեբեան  
մեզ պիտի աւանդէ զայն, մեր ձեռագրաց  
ցոյցակին մէջ:

Զմիւռնեան տպագրութեան լաւ և յոռի  
կողմերն հոս նշանակելն աւելորդ է, քանի  
որ համեմատութիւնը պիտի տեսնենք յետոյ:

Անցնինք Վնեանեան — Բագրատունեան  
տպագրին: Անոր պատմականն արդէն հա-  
մառօտիւ կը նշանակէ մեր ձեռագրիներու  
ցանկի հեղինակը, Հ. Մ. Ազեբեան: Հոս  
կը դնենք ամբողջապէս: « Եզնիկ կողբա-  
ցի, որ և Եզնիկ ասի յոմանց, աշակերտ  
Սրբոց Թաւադմանչացն Սաահայ և Մեւ-  
րոպայ, ի Ե. դարու. (յետոյ կարմրագե-  
ղով ընդգծեալ) Գիրք հոգս ընդդէմ հիւն  
սղանդատութեոց, Ուղղագրեալ գրչաւ ի վե-  
րայ տպագրեալ օրինակի ըստ ձեռագրի  
միւր գտելոյ ի Թուին Հայոց Զիթի ի  
Թովմայ վ. է՝ ի վայելումն Ներսեսի վ. ի,  
որ այն իսկ է զպապիտեան տպագրութեան  
իզմիրն. (զոր ոչ պահեցին անփոփոխ ի  
տպագրելն). զոր և ի ձեռս բերեալ տի-  
րացու Գէորգեայ Տէր Յովհաննիսեան՝  
սրբագրեաց ըստ նմին զտպագրեալ օրի-  
նակ մի և յղեաց առ մեզ, 1784. « ՌՄԼ Գ. ի  
հոկտ. տնս զլիշատակարանն յերես 272 »:

Սակայն ուշ դնելու է որ կրկին են  
Զմիւռնեան օրինակները. մինք զանոնք  
Ա. և Բ. կը կոչենք: Ահա այդ յիշա-  
տակարանը Զմիւռնեան սրբագրութեան Ա.  
օրինակին մէջ. « Սրբագրեցաւ ի վերայ  
սրբագրելոյն ի Գէորգեայ ի ձեռագրէ գրե-  
լոյ ի Թուին Հայոց Զիթի ի Թովմայ վար-  
դապետէ ի վայելումն ամենագով վարդա-  
պետին իւրոյ Ներսեսի »:

Բ. օրինակին մէջ (նոյնպէս էջ 272) սա-  
կայն բան մ'աւելի կը պարունակէ այդ  
յիշատակարանը, որ շատ հետաքրքրա-  
կան է մեզի. « Սրբագրեցաւ ի սրբագրե-  
լոյն ի Տգ. Գէորգեայ՝ յաւի 1819. և  
ի կատարած բուն Ձեռագրոյն զոյ այս  
յիշատակարան. Շնորհօք և սղորմութեամբն  
Աստուծոյ կատարեցի զգիրքս Եզնիկայ ևս,  
պիկար Թովմա վարդապետս ի վայելումն

Արբանամ» ևն. որ ձեռագիրը գտած է և տուած Յա-  
կօրայ, Վերջարանին մէջ ալ զորոքեալ ակնարկուած է  
Յակօր « և ոչ Արբանամ » որ « ոչ սակաւ աշխատանս  
կրեաց » տպագրութեան գործին մէջ:

1. Բարգէն Ս. և ուրիշներ Զմ. այս ապ. ընդհա-  
րպէս սխալմամբ 1763ին իր դնեն:

2. Միւրն մէջ Բ. օրինակը բերուած՝ յապաւումն  
յաւելումը բնագրին մէջ անցուցած. միւս օրինակին մէջ

զրկակները գծուած են, և յաւելման նշաններ դրուած՝  
պակասները լուսանցքին կամ էջին ստորագր. լրացնելով,  
ստանէնք իր տեսնուի Տերագու Գէորգի սրբագրութեան  
ներսն զրայն սրբագրութեան է, հաւանօրէն մեր երկու  
հայերէն՝ որոնց անունը սկզբնապատճառ կը տեսնուին  
զանգամանակն ներք. Հ. Բ. Գ. ? և Հ. Փ. Բ. Ա. =  
Հ. Փելեպպոս Թ. ? Աւանան ? մն. 1780-1784. 1847.  
Իսկ միւսը Ա. հաւանօրէն Բագրատունցիին ձեռագրէն է:

ամենագով վարդապետին Ներսիսի ի բռնի  
Հայոց ԶԻԹ. յորմէ և տպագրեալս է»:

Եւ վերջապէս այս սրբագրութեանց հա-  
մեմատ Բագրատունին տպագրեր է 1826ի<sup>1</sup>  
հրատարակութիւնը և քնականաբար չար-  
համարհելով Նախնիի դիտումը, ինքն ալ  
օգտակար տեսած է բաժանուեալները լոկ չորս  
զլխակարգութիւններ<sup>2</sup> զնելով: Աւելի ինչ  
կընար ընել՝ երբ լաւագոյն ձեռագիրներ  
կը պահպանէ. և սակայն Բագրէն Սրբա-  
գան կը պնդէ թէ «Եզնկի տպագրութիւն-  
ները զիտնօրէն եղած չեն»<sup>3</sup>: Այս է եղբ  
Marièsի համեմատ Եզնկայ առաւել յա-  
րացոյն ձախորդութեան հանդիպելը Բագրա-  
տունիէն, հապա ինչո՞ւ այնքան խնդրուած,  
և զնախատուած է Եւթագիրներու և նմաննե-  
րու գործը Դ-Ե դարերուն, և այն Ս.  
Փրոց զլխակարգութեանց, բաժանում-  
ներու մասին: Իսկ թէ նա իր կողմէն  
սրբագրութիւններ կատարած է ըստ ըմբ,  
զայդ կը ժխտենք<sup>4</sup>: Կը մնայ գրքին ան-  
ուան խնդիրը. հոս ալ անբասիր է Բա-  
գրատունի, քանի որ պատշաճ չէր ան-  
վերնադիր հրատարակել, յարմար անուն  
մը կնքել կը մնար. յետոյ պիտի խօսինք  
«Եզն ազանդոց» կոչումին մասին<sup>5</sup>:

Այժմ նկատենք Աճառեան — Գ. Տէր  
Մկրտչեանի գործը: Ահա թէ ինչ կ'ըսեն  
անոնք նորագիտ ձեռագրի մասին: «Փրիչն  
է Լուսեր, որ ԶԻԹ = 1280 թուին գրեր  
է Ներսէս վ. ի և իր աշակերտ Եսայիի  
համար. յետոյ (Թուի Ներսէսի մահէն վեր-  
ջը) թողմա վարդապետ իւր աշակերտին

հետ վերստին համեմատել է ձեռագիրը և  
սխալները մանրատառ նշանակեր»<sup>6</sup>, ևն  
ինչպէս որ կ'ըսէ մէջքերուած յիշատա-  
կարանն ալ. «Շնորհօք և ողորմութեամբ  
Աստուծոյ կատարեցի զստոս աստուածա-  
շունչ՝ ես փոյուն և ապիկար գրող Լու-  
սեր, ի վախելումս սուրբ և ամենագով  
վրն. Ներսեսի»<sup>7</sup>:

Հոս դնենք ուրիշ յիշատակարան մ'ալ  
որ կարկոր է. «Չորստահալսդ այսմ  
մատենի աղաչեմ յիշել յաղօթս զստա-  
ցող սորին զմեծ հոնտորն Ներսէս. նոյն-  
պէս և զնուաստ ողիս Եսայի հետեւող և  
աշակերտ սուրբ առնն Աստուծոյ Ներս.  
վ. դի»<sup>8</sup>:

Հուսկ ակնարկը թողմա վ. ի՝ ուրիշ յի-  
շատակարանի մը մէջ. «Աստուած ողորմի  
Ներսէս վարժապետին և ինձ թողմա  
վարդապետիս որ զանարուեստ գիրս յա-  
ւարտ ամի...» ևն:

Ահա ինչ որ յիշատակարանները մեզ  
կը պատմեն:

Հիմա բաղդատենք այս վերջինները  
Զմիւռնեան տպագրին մէջ յիշածնուն և  
Հ. Մ. Աւգրեանի գրածնեղուն հետ:

Հոն՝ ԶԻԹ ձեռագիր մը, որ Զմիւռնեանի  
քնագիր կը ծառայէ, հոս ալ նոյնպէս  
ԶԻԹ ձեռագիր մ'է որ կը յայտնուի: Եր-  
կուցին ալ զըջութեան թուականին նոյ-  
նութեան մասին կասկած չկայ:

Սակայն գրչին, ինչպէս և Եսայի (Ներ-  
սէսի աշակերտին) մասին Զմիւռնեան և  
Աւգրեան տեղեկութիւնները կը լռեն, մինչ

1. Վնեպեանի տիպերն են. Ա. 1826. — Բ. 1850  
(թպէտ ճակատ, Թուական Նախորդին է). — Գ. 1868  
(առ աւ ճակատ 1826 կը կրէ). վերջինն է Դ. 1926:

2. «Ձանյօղուոր զմեհէտ զըջագիրն առաջաք է զիր  
և ի զուխս» (Տէս Զնեպեանի, էջ 3):

3. Եզնիկ (մանր դիտողութիւններ). Հանդէս Ամս.  
1907, էջ 310:

4. «Ցանկորդէի վրեպակաց տառիցն՝ որ ինչ ուրեք  
յայտին գուռակէն՝ ուղղեալ, զկարեւորն՝ որպէս էր յօրի-  
նակին՝ աստղանի ներքոյ դրոյմեցաք» (Զնեպեանի, էջ 4):

5. Ձեռք խօսիւր միտ տպագրութեանց վրոյ որպէսեւ  
Թէ. Փարեգիւր (1860). և Թէ Կ. Պուլսինիւր (1864,  
1869, 1873, 1879) վնեպեան-Բագրատունեան տպա-  
գրին համեմատն են ըստ ամենայնի, Հեաքքրքրակա

պիտի ըլլար Տ. Եպ. Պաւսեանի կարծիքով Մարգար  
մէջ եղած տպագրութիւն մը 1774ին, սակայն ասոր  
մասին տեղեկութիւն չունինք ցարդ:

6. Քննութիւն և համեմատութիւն Եզնկայ նորագիտ  
ձեռագրին. (էջ 4.) տպ. Վիեննա 1904:

7. Գիտեալու է որ նորագիտ ձեռագիրը կը պարու-  
նակէ «Առաջարկն Թագաւորութեանց» (գրքին): յետոյ  
«Արքայն Եփրեմ... Մեհնութիւն Սամուէլի» (այսինքն  
Թագաւորութեանց գրքին) յետոյ. «Մեհնութիւն Մա-  
ցորացոյ», ուսկից վերջ 45 էջին մէջ զըջին յիշատակա-  
րանը. անկէ վերջ «Մեհն. Յնուսայ և դատաւորաց»:  
վերջապէս 187 էջն է որ կը սկսի Եզնիկ մինչև 314 էջ:

8. Այդ, էջ 7:

9. Այդ, էջ 6:

նորագրւում ձեռագրին մէջ յայտնի է Լուսեր իբրեւ զրիչ, և Եւսայի իբրեւ աշակերտ Ներսէս Վ.ի. Ահա տարակոյսի կէտեր:

Համաձայն են սակայն, Ներսէս Վ.ի. և անոր աշակերտը Թովմա Վ.ի մասին:

Աճառեան յետ ըսելու «Գրիչն է Լուսեր... գրեր է Ներսէս Վ.ի և իւր աշակերտ Եւսայիի համար», կը յաւելու. «Յետոյ (Թուի Ներսէսի մահէն վերջ) Թովմա Վ.իւր աշակերտին հետ վերստին համատեք է ձեռագրեր և սխալները մանրատու նշանակեր»:

Բայց Աճառեանի այդ յաւելումը կարծիքը ինչպէս կարելի է հաշտեցնել վերն յիշուած յիշատակարանին հետ, այսինքն Թովմա Վ.ի. ինչպէս կրնար ըսել. «Կատարեցի զգիրքս Եղնկայ... ի վայելումն ամենագով վ.ին Ներսէսի», եթէ Ներսէս մեռած էր. հարկ է ըսել, ուրեմն, թէ անոր կենդանութեան տեսն:

Բայց համամիտ ենք Աճառեանի միւս մասին նկատմամբ, ընդունել թէ Թովմա Վ.ի. ձեռագիրը սրբագրած է իր սշակերտին հետ ինչպէս կ'ակնարկէ «գաւառուստ գիրս յաւարտ ամի. Բրիստոս Աստուածայն աշակերտին ողորմեսցի որ ուր (սակաւ անշուշտ!) ինքն ընդ մեզ տանջի». ձեռագրի համեմատութիւն և սրբագրութիւն կատարողները կրնան հասկնալ այդ տանջանքի կշիռը:

Եւ ստուգիւ կը վկայէ այդ գործին ձեռագրերն ինքնին, ինչպէս նաև անոր 108 էջին յիշատակարանին բացատրութիւնը՝ բնական է Լուսերէն զատ մէկէ մը աւելցուած. «Աւագ և եղուկ է անգեռ ցրագրին», ինչպէս յետոյ իր իսկ խոստովանութիւնը «ես փցուն և ապիկար գրող Լուսեր»:

Մինչև հիմա ըսածնիս լուի Աճառեանի ձեռագրեր և անոր յիշատակարաններուն մասին էր: Սակայն անգամ մ'ալ համեմատելով Զմիւռնեանի մէջ եղած Թովմա Վ.ի յիշատակարանին հետ, այնպիսի տարբերութեան մը

կը հանդիպինք որ, մեր կարծիքով, կրնայ մեզ հաւանական մեկնութեան կամ լուծման մը առաջնորդել:

Եւ ստուգիւ, մինչ Աճառեանի ձեռագրին մէջ Թովմա Վ.ի. կ'ըսէ. «Աստուած ողորմի Ներսէս վարժապետին և ինձ Թովմա Վ.ի. որ գաւառուստ գիրս յաւարտ ամի Բրիստոս Աստուած ոյն աշակերտին ողորմեսցի, որ սակաւ ինքն ընդ մեզ տանջի», Զմիւռնեանի մէջ ոչ անարուստ գրչի խօսք կայ (որ սրբագրութիւն հասկցուի) և ոչ վարդապետին հետ տանջառդ աշակերտի, այլ պարզապէս. «Շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ կատարեցի զգիրքս Եղնկայ ես ապիկար Թովմա Վ.ի վայելումն ամենագով վարդապետին Ներսէսի ի Թուիս հայոց ԶԹ»:

Ուրեմն ինչ է, մեր կարծիքով, հաւանական մեկնութիւնը այս խորհուրդին: Ահա մեր ենթադրութիւնը:

Աճառեանի ըսածներէն և մեր խորհրդարարութիւններէն արդէն հետեւեցաւ թէ Նորագրւում ձեռագիրը Լուսերի մը գրչութիւնն է, օրինակուած Ներսէս Վ.ի. և հաւանաբար անոր աշակերտ Եւսայիի համար. սակայն Թովմա Վ.ի. աշակերտ Ներսէսի՝ Լուսերի գործին թերութիւնը տեսնելով, համեմատած ու սրբագրած է զայն մեծ աշխատանքով. և ահա այսպէս յառաջ եկած է Նորագրւում ձեռագիրը:

Կը թուի որ Թովմա Վ.ի. ընտիր ճաշակ և բաւական ալ գիտութիւն ունեցած է, քանի որ իր վարդապետին ի վոյելումն այդ գեղեցիկ գիրը նուիրեք է՝ հոգ տանելով և սրբագրելով զայն. բայց մէկ կողմէն սրբագրուած, քերուած, աւելցուած օրիւնակը պատշաճ չհամարելով իր վարդապետին, միւս կողմէն՝ լաւագոյն օրինակներ գտնելով փափագեք է նոր մը գաղափարել և կատարել է զայն ալ «Շնորհօքն Աստուծոյ... ԶԹ» թուին:

Որով կ'ունենանք երկու տարբեր ձեռագիրներ, երկուքն ալ ԶԹ = 1280 թուականով. նախկինը՝ այժմեան Աճ-Գ. Տ. Մ.ի Նորագրւում ձեռագիրը. վերջինն ալ անմիջական նախագաղափարը Զմիւռնեան

տպագրին և միջնորդարար՝ վենետիկան-  
բագրատունեանին:

Հիմակ անշուշտ պիտի հարցուի. ինչո՞ւ  
դիմել այս անթաղութեան որ առաջին  
տեսութեամբ բոլորովին ձրի և քմահաճ  
կ'երևի:

Հիմնական պատճառը որ կը ստիպէ մեզ  
իրարմէ զատ և անկախ դնել այդ Չիթ  
թուակիր ձեռագիրները՝ իրենց մէջ գոյու-  
թիւն ունեցած մեծ տարբերութիւնն է:

Վասն զի Աճառեան որչափ որ փառա-  
բանէ իր գտած ձեռագիրը (և իր հետ ամէն  
անոնց որ մեծ ժխոր հանեցին քսան և  
աւելի տարիներ առաջ), սակայն երբ զայն  
կը քննէ և կը համեմատէ Բագրատունեան  
տպագրին հետ, կը ստիպուի խոստովանիլ  
թէ «վերոյիշեալ հազարաւոր ընթերցուած-  
ները մեծագոյն մասամբ կը ներկայացնեն  
ուղղագրական տարբերութիւններ, որոնք  
աւելի գրչագրական տարբերութիւն ունին  
քան թնոգրական»: Սակայն շարունակելով՝  
այնպիսի նոր խոստովանութիւններ կ'ընէ  
որ նախորդ ըսածներուն ջրու մնն. «Քսանի  
մը տեղ կը տեսնենք որ ձեռագիրը սխալ  
կամ անյարմար ընթերցում մ'ունի, այն-  
պէս որ հրատարակիչներու սրբագրու-  
թիւնը տեղի է»: Ո՛ր միայ հապա քեաւ-  
գրական անաղարտութիւնը, Յաջորդ տա-  
ղերուն մէջ շատ միամտօրէն կը խօսի,  
հակասելով իր նախապէս ըսածներուն.  
ահա, թող զատեն ընթերցողները. «Տեղ  
տեղ կան պակասաւոր մասեր որոնք հրա-  
տարակիչներն իրենց կողմէ լրացուցիւր են.  
այս լրացումներն ինչքան ճարտար և յար-  
մարաւոր ըլլան, այնու ամենայնիւ կը մնան  
կեղծ՝ ինչպէս էլ 280, տող 20 մինչև  
281, տող 2 ներմուծուած հատուածը՝»:  
Քննենք Պ. Աճառեանի ըսածը:

Նախ կ'ընդունի թէ պակասաւոր մասեր  
կան. առով ինքն իսկ կը մատնանշէ իր  
գտած ձեռագրին մեծ թերութիւնը, իսկ

թէ հրատարակիչներն իրենց կողմէն ձառ-  
տար և յարմար լրացումներ ըրած են՝ ձրի  
վնիւ է. օր. Բագրատունին շինած չէ այն  
հատուածը, որովհետեւ ան արդէն գոյու-  
թիւն ունի Չմ. տպ.ի մէջ, ինչպէս կը  
տեսնուի նոյն գրքին 256 էջին մէջ, և  
յետոյ, Գեորգ սրբագրիչը՝ որ ձեռագիրը  
տեսած է (Չմ-Բգրտ. տպ.ի նախագալա-  
փաւրը) և անոր հետ համեմատած այդ Չմ,  
տպ.ը, ամենեւին չէ դպած այդ հատուա-  
ծին, մինչ այլուր անորոյ և կամ և մ'ա-  
գամ ջնջիւր է քնագրին համեմատ:

Իսկ Բագրատունիի մասին կանխածիլը  
ոչ միայն ձրի այլ և խորին անգիտութիւն  
է այն հոգեբանութեան և պաշտամունքին  
զոր ունէր նա Նախնեաց երկերուն:

Այն Բագրատունին որ յետին դարերու  
երկրորդական, թափփուկ, սխալագիր  
գործեր անգամ «գտեալ... գաղափարեաց  
զգուշութեամբ» ըստ 1825ի յիշատակարա-  
նի՝ մը, միթէ Ոսկի-Եզնիկը պիտի փո-  
փոխէր, խանգաւէր անզգուշութեամբ:

Ընթերցողներուն կը թողունք քննել հոս  
այդ հատուածը և ըմբռնել խօսքի ներդաշ-  
նակ կոպը, եզնկեան յստակ, չսփուած  
լեզուը, և իրեն յատուկ շարադրութիւնը:  
«Միթէ և զգուշեան ասիցին թէ ձուկն  
էր և ոչ գառն՝: Քանզի Քրիստոս գա-  
մենայն կերպնորս աւխտիոր ոտեր, որպէս  
յույտ և յաւետարանին, իսկ քե տսիցին քե  
Քրիստոս յետ յարութեան եկեր զձուկն և ոչ  
զմիս, վասն ոչարիկ և մեք զձուկն ոտեմք  
և ոչ զմիս: Ասիցի և քե ուրեմն՝ և ետքս  
այժմիկ մի կերպեմ զձուկն, այլ ի յարո-  
րեան անդ, որպէս և եւ յետ յարութեան  
եկեր՝ զձուկն զոր եգիտ առ ձկնորսան: Այլ  
զի և ձուկն միս է ևն»:

Մենք կը կարծենք որ կեցծարար կամ  
շինող հրատարակիչներ չկան. և Պ. Հ.  
Աճառեան փոխանակ կասկածելու կրնայ  
ուրախանալ որ ուրիշ ձեռագրի մէջ գո-

1. Քնն. և հմտ. Եզնկայ Նորագիտ. Զ. էջ 70-71.

2. ՏճԹ. Վ. Թորգոման. Բժշկական ձեռագիրք Ս.  
Ղազարու վանքին. Բզմվ. 1926, էջ 68.

3. Ընդգծեալ մասն է միայն որ կը պակսի Աճ. Զ.ի

մէջ. սկիզբն և վերջն խօսքին կապին համար աւելցու-  
ցինք:

4. և 5. Գեորգ սրբագրիչն ուրեմն ուղղած է սպառ,  
եկեր՝ կերպ (Տճա Բգրտ. տպ. էջ 280-1):



բեր է Ազգերեանի<sup>1</sup>, Ջմ. տպագրին<sup>2</sup>, և Բագրատունիի<sup>3</sup> ԶԻԹ կոչած ձեռագրին, հակառակ Բարգէն Սրբազանի որ կ'ըսէ. «Այս միակ ձեռագիրը (ԶԻԹ) որ նախա տիպը եղած է Թէ՛ Զմիւռնիոյ և Թէ՛ Վե. նետկի հրատարակութիւններուն...»։ Նման պարագաներու (ինչպէս տեսանք յիշատակարաններու ըննութեան մէջ) յաւելցած դժուարութիւնը այս կամ այն ոճով մեկնելու է, ինչպէս կերպով մը փորձեցինք մենք։

Սակայն հուսկ հարկ կը համարինք ըսել

որ Աճ-Գ.Տ.Ս.Պ. ձեռագրի թիրութիւնները դուրս ցայտեցնելը ձեռագրիներու նոյնու թեման կարծիքը շնչելու համար է միայն. եզակի և երբեմն ուղիղ ընթերցումներ և ձեռք չեն պակսիր, որոնք Բագրատուն. նեանի կամ Գէորգեան սրբազրութեան ինչ ինչ վերականգնելը պիտի ուզէին։

Հոս կը սկսինք ցուցադրել համեմատու թիւները Ջմ. տպ.ին, Գէորգեան սրբազրութեան<sup>4</sup> որ նոյն է Բագրատունեան տպ.ին հետ, և երրորդ Աճեանեան-Գ. Տէր Սրբազան ձեռագրին<sup>5</sup>։

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԲՆԱԳԻՐՆ ԵՐՈՒՆ

ԶՄԻՐՈՆ. ՏՊ.	ԲԱՐԳ. ՏՊ. — ԳԵՐՈՆԵԱՆ ՍՐԲ.	ՁԵՆԱՆԻՐ ԱՃ — Գ. ՏԵՐ ՍՐԲԱՆ.
էջ. տող. Երանելայն Երանկայ կողմ. էջ. տող. (Երանելայն) Եր(ա)կայ	Երանելայն Եր(ա)կայ	Երանելայն Եր(ա)կայ
Բարգէն Սրբազանի Աշակերտի Ս. Մարտոկայ մեծի թարգմանի Արտագրութիւն ընդդէմ՝ զա. նազան հերոսածոց.	Արտագրութիւն կողքադոյ	Երանելայն Եր(ա)կայ
ԶԱՌ Ա.	ԳԻՐԲ ԱՌԱՋԻՆ	(Հիշ գիրք տառախն իշոճ տղան ղոց հերոսածոցն.
Յաղագս անցնութեան Աստուծոյ։	Եր(ա)կայն ընթերցող ընթերցողն	Երանելայն Եր(ա)կայ
Յորժամ զաներկութիւն և զնորի մշտնջենաւոր	5 Յորժամ զաներկութիւն և զնորի մշտնջենաւոր	... զաներկութիւն. ճախապէս գրեալ
2 1 զմիտս յատակել	4 զմիտս յատակել	զմիտս յատակել
5 զաղան և զրիմն ի բաց առնել? (պարզել?)	... պարզել	... պարզել

Քննենք նախ եղնկայ գրքին անուան կոչումը։ Յակոբ Նալեան Պատրիարք (տպ. Ջմ. 1762) զայն կոչած է «Գիրք Ընդդիմութեանց»՝ ճակտին վրայ. իսկ բուն գրքի սկզբնադրութեան՝ դրած է «Արտագրութիւն ընդդէմ զանազան հերոսածոց»։ Բագրատունին կը լսենք է «Եր(ա)կայն» և իրեն հետեւեր են Փարիզի (1860) և Կ. Պոլսի (1864-69-73-79) բոլոր հրատարակութիւնները։

Հինքերէն՝ Բագրատունիի հետեւող կրկան համարութիւ շայկազեան Բառարանի հեղինակները, կոչելով զայն «Գիրք յեղծումն հին աղանկոյ հեղինակաց և ղենի պարսից և մուրաբիթեան մասն յեղծեցող» են. (Յժբն. էջ 21)։ Արդի Բանասէրները զիս համաձայնած չեն մէկ անուան մը չուրջ. յիտակն ընելով շատ համակրութիւն ալ չունին Ջմ. կամ Բագրատունեան կոչումներուն։ Վիեննայեան հայր «Ընդդէմ աղանկոց» կը գործածեն քանի որ եղծի ոսկեգրու բառ է (!)։ Նորայր ալ ընդդէմ կ'ընդունին ինչպէս յայտնի է շայկազեան բառարանութիւնէն (էջ 38) և յետոյ «Կար. ծնծ լուսաղոյն է ըստ Վիեննայի Միթթարիանց կոչել ընդդէմ աղանկոց» (Քննասէր. Ա. Պրակ. էջ 8. վիմաւորպ. Ստոքհոլմ. 1887)։

1. Ձեռագիր ցուցակ զբնագրաց Ս. Ղազարու։
2. Էջ 272 (ձեռագիր)։
3. Զնկուցումն Բզբո. տպագրին էջ 3։
4. Երանի (մանր դիտողութիւններ) Հանդէս Ամս. 1907. էջ 810.
5. Հետազոյ համեմատութեանց սինակներուն մէջ պէտք է ուշ դնել. Ա. — Բագրատունեան սինակի տա. դիտուն մէջ փակագծեալ գրեւ կը նշանակեն որ՝ Թէպէտ

Ջմ. տպագրին վրայ կատարուած են այդ սրբազրութիւնները, սակայն Բզբո. տպագրութեան մէջ չեն մտած, անշուշտ մտադրութեամբ կամ գրաւարի սխալմունքով։

Բ. — Եր(ա) Ջմիւռնեանի և Բագրատունեանի հանդէպ Աճ. ձեռագրի սինակին տողերը պարզապէս են՝ ըսել է Թէ նոյն են ըստ ամենաճշդի Բզբո. տպ.ին հետ։

Գ. — Իւրաքանչիւր դիտողութեանց սկիզբը նշանակուած էջին ու տողերը Բագրատունեան տպագրին են (1826)։



էջ. տող.	էջ. տող.
6 մթաբն որ զբբոն ըղալացն	6 8 մթաբն որ զբբոն(ն) ըղալացն ... զբբաւն ըղալացն
7 ի յասակութիւն լուսոյ լիցի	4 ... լիցիք
8 Եւ արգ ջանգի մին է էութիւնն	6 ... մի էութիւնն անքնին է ... մի էութիւնն անքնին է
անքնին է	
10 ընծայութիւն	8 ընծայութիւնն
11 եւ առ էութիւնն նորին դաւա-	10 եւ առ էութիւնն նորին դաւա- ... էութիւնն նորին դաւաւութիւն
նութիւնք	
14 յամենի առեալ լինել	14 ... առեալ լինել
22 Նիւթ ինչ	23 Նիւթ ինչ
3 2 եկին ի լզոյէ ի գոյ	7 2 եկին ի լզոյէ և ի գոյէ ի գոյ (տպ. ի լզոյէ և ի գոյէ)
4 եւ ամենայն ի նմանէ	5 եւ ամենայն ի նմանէ
6 որոյ ըստ... տունալ է	7 որոյ ըստ... տունալ է
8 երկնէկաց	10 երկնէկաց
14 զի էանի	18 զի անն
11 ժամանեցուցաւ. և իւրոց	14 ժամանեցուցանել, և իւրոց (յ տպգր. սխալ.)
15 յունչէ յինչութիւն	19 յունչէ յինչ
17 աննախանձաբար	21 աննախանձ
21 սեպակահանալ	8 1 սեպակահանալ
22 և կամ անզօր	2 և անզօր
23 եւեթ խորիցէ	3 եւեթ խորիցէ
4 1 և ոչ նոսազ	4 և ոչ նոսազ
1 ինքեան	5 ինքեան
6 տայ ամենայնի զկենդանութիւն	11-12 տայ ամենայնի կենդանութիւն
4 բովոնդակ	18 բաւանդակ
14-15 Եթէ աղբիւրք մշտաբուղիթ.	24 Եթէ աղբ(ե)րք մշտաբուղիթ, Եթէ աղբերք որ որք

Մարիէս ֆրանս. քահանան իր ընդարձակ ուսումնասիրութիւնն մաս մը նուիրած է զբօի անուան, և իբրեւ գիւտ կ'առաջարկէ այսուհետեւ կոչել « Յաղագս Աստուծոյ » . սակայն ներուի ըսել որ շատ բռնազբօս և անհիմն է այդ կոչումը . այդ կայ Յաղագս Աստուծոյ մաս մ'ալ, սակայն սկզբնաւորութիւնը միայն, և արդէն Մարիէսին շատ կանուխ Յակոբ Նալեան Պարք. 1762ին դրած է « Ճառ Ա. Յաղագս անքննութեանն Աստուծոյ », բայց միայն Ա. զլիւսուն համար էջ 1-5. և ապա հետզհետէ կը փոխէ ըստ նիւթին: Ով որ գիտակ է Եզնիկի նիւթին և գիտման՝ կ'իմանայ թէ որքան անտեղի է այդ անուանը:

Պրոֆ. Ն. Ազոնց Մարիէսի ուսումնասիրութիւնը քննած ատեն նախ « եղծ »-ը չ'ընդունիր Հ. Գալէմբերեանի հետ՝ իբրեւ նորարար և խորք Եզնիկի. յետոյ փոխանակ ընդդիմադրեալն (ուղղիւն է ընդդիմութեանք) կամ եղծի՝ կը մասնանշէ Եզնիկի յատուկ և Ժանթ յանդիմանութիւնը, որով կը համարի որ Եզնիկի զայն կոչած ըլլայ « Յանդիմանութիւն հերձուածոց կամ աղանդոց » (Քննաւ կան նշմարներ Եզնիկի մասին. Բզմվլ. 1925 էջ 199):

Հուսկ անդորադատնալով որ Եզնիկի (էջ 144 Բզրտ. տպ.) ճոտ բառը կիրարկիր է « ոչ մոռա-ցաք յառաջին ձառն անուն », կ'ըսէ. « Եզնիկի ապագայ հրատարակչին կարող էինք յանձնարարել ձառք յանդիմանութեան գլխադիրը » . (Քննիւն. նշմարներ ևն. Բզմվլ. էջ 200):

Սակայն ձառի անդորարարութիւնը կարծեմ Յակոբ Նալեանի ալ ըրած ըլլալու է երբեմն, քանի որ իր բաժնած 76 գլուխներն ալ ձառ կ'անուանէ. իսկ Յանդիմանութիւնն ալ թնալաբած էր արդէն Հ. Գ. Գալէմբերեան. (Հանդէս Ամ. 1893 էջ 290): Զից ինչ հուր ընդ արեգակամբ...:

Լաւագոյն կոչումը, մեր կարծիքով, ընդդիմ հնդկաւանդոց կամ տղայորոցն է, քանի որ այդ տիտղոսով են Դ, Դ, Ե դարձն Ա. Հարց գրեթէ բոլոր նման երկիրը, ինչպէս յայտնի է:

Կ'արժէ հուսկ նշանակել որ Յակոբ Նալեան Պար. այն բոլոր գլխաւորութիւնները որ հեր. քումի շուրջ են՝ դրած է « Եղծումն » կամ « Եղծանէ » . սակայն ազդուած, սիրտի ըլլայ անշուշտ Բագատունի՝ կուռ ու գեղեցիկ ձեռի վերածելով, ինչպէս և Հակագեանի հեղինակները (1836-7):

6, 3. — Զի մի տաւալ՝ որ ձորոս եռլաթսն, այդիւն հայեղոյ ի յասակութիւն լուսոյն լիցին. Նախ ըսենք որ զբբոն է ուղիւր. և արդէն կայ Զմ. տպ. ինչպէս նաև Հիւր. Բորի. մէջ. վրիպակով՝ չէ մտած Բզրտ. տպ.ին մէջ:

էջ. տող.  
18-14 անխախտ

էջ. տող.  
22 անխախտ

նախադիւս անխախտաւ. յետոյ ո թե-  
րուած  
որք ի նորա հրամանէ

15 ի նորին հրամանէ  
16-17 և ոչ պակասին  
17 զգիտմանը  
20-21 որ աղբիւրն է բարութեան  
22 այսինքն զբանաւորս և զամ-  
բանս

25 ի նորա հրամանէ  
և ոչ պակաս(ին)  
9 1 զգիտմանը  
6 որ աղբիւրն է բարութեան  
8 այսինքն զբանաւորս և զան-  
բանաւորս

բոլորն  
... է է բարութեան (և ինչման նշանով)  
յիք այսինքն  
գեղեցկութեան (տողամիջում 6)

5 4 զի գեղեցկութեանն

15 զի գեղեցկութեանն

ձԱՌ. Բ.

Յաղագս եղծման հիւլէից. (Զ.Բ.  
միշտ հիւլէ)

10-11 ի բարւոյ արարէ  
14 բարւոյ  
16 Թարգմանի  
17 ևթէ ի բարեբար  
17 չիք եղեալ  
6 1 Եւ արդ զ՞բոս  
3 զոր բարին կարծեն  
2 4 ընկերին  
6-7 խոնոռածոյ  
8 ընտելին ունելով՝ առանց  
14 խարելի  
21 խոնոռածովք  
7 5 փոփոխմամբք

19-20 ի բարւոյ արարէ  
23 բարւոյ  
24-25 Թարգմանի  
1 ևթէ ի բարեբար  
10 2 չիք լեալ  
5 Եւ արդ զ՞բոս  
7-8 զոր բարին կարծիցեն  
8-9 ընկերին  
15 խոնոռածոյ  
16 ընտելին, առանց  
21 խարելի  
11 6 խոնոռածովք  
14 փոփոխմամբք

ի բարոյարարէ  
բարոյ  
Թարգմանի  
ի բարեբար (արբ. լուսանցցում)  
չիք լեալ  
Եւ արդ զ՞բոս  
ընկերին  
խոնոռածո  
խոնոռածովք  
փոփոխմամբք ( Յ տողամիջում ևոյն  
գրիցի)  
ևթէ է ( է տողամիջում ևոյն գրիցի)

5 ևթէ է

15 ևթէ է

Յայտնի է որ միայրքն և շողալցենը մեկնութեան կարօտ են։ Ինչ ըսած են բանաստիճիւրը։  
Հ. Գ. Վ. Նահապետեան նոյն շողալցենը կը սրբագրէ գալցին, ըսելով թէ «աջօրու աղտը և  
բիծը... երբեք չէ կարող շողալ» թանկը ենթագրելով աղտոտ նիւթերը, որոնք հաւանական է որ  
գտն և բիծը ծածկեն։ ուստի զբարին գալցին։ Ան իր սրբագրութեան փորձը, որ սակայն զգուշա-  
րէ ընդունիլ քանի որ բնագրին մէջ էական փոփոխութիւն մ'է առանց ձեռագրական փաստի, ինչ-  
պէս և առանց ծանր հարկի։

Ռարիշներ առանց բնագիրը փոփոխելու շողալը կը մեկնեն՝ անոր նոր նշանակութիւնը տալով  
թէ՛ հոս և թէ՛ յետոյ «ի նոյն օդս գիշակեր թռչունքն ընդ ազնուագոյն թռչունսն շողալցեն» (էջ  
146)։ Այսպէս Հիլզ. Բորն. յիշեալ վկայութիւնները, ինչպէս և Աբեբրիանոսի «Յորժամ մանր  
նաւքն ի մէջ մեծամեծ նաւացն շողալցեն» կը մեկնէ սողալ (շ = ս լծորդ են), սիգալ, սլանալ,  
շողալ, ձնալի, ի վեր երևիլ իմաստներով։

Հայկազեան Բառարանի կը հետեի Գարագաշ ալ իր ճշայակ Ոսկեղէն Դպրութեան մէջ (հտ.  
Բ. էջ 168. Կ. Պ. 1889)։ «Շողալ յայտ առնէ ուրեք երևիլ, խաղալ, մանաւանդ ի հեռատեսնէ»։

Բարգէն Սյրբազան երկարօրէն զբաղելով այս բառի մասին, յսնի նոր իմաստ և յանագրութիւն  
կը համարի տրուած նշանակութիւններն ու մեկնութիւնները. ինքը կը բառականաւայ օր. «գի-  
շակեր թռչունքն ընդ ազնուագոյնսն շողալցեն»ը մեկնել բնական իմաստով, օր. լուս, գեղեցիկ,  
ազնու բանը տգեղին, չարին քով համիմատաբար կրնայ ըսուիլ թէ կը փայլի, կը շողալ. բայց  
Եզդիկի նախորդ վկայութեան վրայէն լուիկ կ'անցնի, ինչպէս Թոռնիան և ուրիշներ ալ։

Տեսնենք հիմա թէ ինչ կը մեկնեն յարակից միայրքն։ Առանց երկարելու Բարգէն Ա.ի հետ,  
որ սինապկեր նուիրած է անոր, իսկին կրնանք ըսել որ Հիլզ. Բորն. կանխիկէն լուսադրոյն և  
զոհադրոյի մեկնութիւն տուած է ըստ մեզ. չեմ գիտեր զիո ինչն է կը տարտամին անոր հետեւե-  
լու։ Միայրէն միերի զրկելով ընթերցողը՝ արգէն կ'իմացնէ Հիլզ. Բ. թէ երկուքն ալ նոյն ար-  
մատն և նոյն նշանակութիւնն ունին, և իրաւամբ, քանի որ ա և և լծորդ են։

Յետոյ մեր Գ. Ճառքներին վկայութիւնը՝ յար և նման Եզդիկի բացատրութեան՝ ամէն կաս-  
կած կը փախտուի։ «Եթէ ոչ նախ զիոմ և զմիեր աչացն մարրիցեն, ոչ կարեն գճառապայթս արեգակնան  
նկատել», ինչպէս հեղինակօրէն գրիք Հ. Ա. Վ. Ղազկիհան ալ (Աղգալար. 16 շուտ. 1928. Կ. Պ)։

Բարգէն Ա. նկատելով հանգիւրծ Հայկազեանի տուած միայրք և միերքի կապը, կ'ըսէ որ

էջ. տող.

էջ. տող.

14-15 Զի որք շարժին և փոփո-  
խին չեն

26 զի որ շարժին և փոփոխին չէ

ձևի Գ.

Յաղագս կեղծաւորական պատ-  
ճառաց կոտակաշտից

8 Խոնարհագունիւց

12 15 Խոնարհագունիւց

խոնարհագունաց

14 ոչ մշտնջենաւորք

23 ոչ մշտնջենաւորք

ոչ մշտնջենաւորք (ս քերտած)

17 առնուցուն

26 առնուցուն

առնուցին (նոյն գրչին ուղղութեամբ առնու-  
ցուն)

9 17 զհոգոց

13 25 զհոգոց

զհոգոց

18 անշնչից

26 անշնչից

անշնչոց

20 բարիւց

14 1 բարիւց

բարեւաց (տողամիտում նոյն գրչից  
ուղղութեամբ բարեւոց)

10 15 որ մերթ կոչի

26 որ մերթ կոչի

զի մերթ կոչի

19 զմիջոց մեծի տանն աշխարհի

15 4 զմիջոց ի մեծի տանն

զի մերթ կոչի

22 պաշտօնէիցն

7-8 պաշտօնէիցն

պաշտօնէիցն

10-11 զիս և զամենայն տիւ

10 զիս և զամենայն տիւ

զիս զատու (տողամիտում և, ի = զիս  
և զամենայն տիւ)

11 1-2 և ի ցայգ զիս զօղեցուցանէ

11 և ցցայգ զօղեցուցանէ

մատոյաւատ

6 ամսոյ ամսոյ

16 ամսոյ ամսոյ

օրինակ

8 օրինակն

19 օրինակն

օրինակ

10 սարսի

22 սարսի

օրինակ

14 չիջուցես

26 խափուցանիցես

օրինակ

18 ժանտաւորութիւն

16 6 ժանտաւորութիւն

ժանտաւորութիւն

17 զանուշութիւն

5 զանուշութիւն

զանուշութիւն

21 չատուածս

11 ատուածս(ն)

զանուշութիւն

22 և անպատունն

12 և անպատունն

և անպատունն (և տողամիտում)

«միմար բառը այս իմաստով (աղտ, բիծ) ուրիշ տեղ մը գործածուած չէ հայ մատենագրութեան մէջ, մեզի ծանօթներուն նայելով... Այդու կամ բիծ նշանակելու համար պէտք է կամ սխալա- գրութիւն ենթադրել միմարք ձևը կամ բռնագրօտուած պէսպիսութիւն մը պղտորութեամբ, աղտ և բիծ հոմանուններուն քով» (Հնգս. Ամս. 1907. էջ 312): Զարմանալին այն է որ Գ. Հառնետրի յայտնի վկայութիւնն ալ կը յիշէ բայց առանց հետեանք հանելու, ժանտաւոր թէ դեռ մերժել կը հզնի մրարք ձևը. «Արդեօք կարելի չէ... մրարքը գրչի սխալ մը նկատել քանի որ միմեր ձևը աւելի շատ գործածուած է միւս օրինակներուն մէջ: Իսկ միմերը իբր աղտ մերենալ՝ տարօ- րինակ չ'ենկիր»:

Անիմանալի հետեանք. ըստ մեզ Արեազանին ըսածն է տարօրինակ, և անոր հակառակը՝ բնա- կան: ԶԷ՝ որ մրարք մութի, սեի, հետեանք աղտի յոռի իմաստին մօտ է. իսկ մերեր պարզա- պէս առած՝ է դէզ, կոյտ, շեղէ ևն: Այլ է թէ միւս կողմէն նոյնարմատ է մրարին հետ և նոյնա- նշան, ինչպէս արդէն ըսինք:

Անցողակի կը յիշենք Հ. Գ. Գալէմբարի առաջարկը, մրարքը՝ մատչլ կարդալու որ սակայն փաստ մը չունի, որով և անընդունելի:

Խեղդիքը նոյնպէս յստակ և ձաւորիչ չէ շողայցիկի մասին. սակայն կարելի է հաւանական մեկնութեան մը յաւելիլ Հայկագեան Բ.ի հետեւելով՝ որպէս թէ մրարին = բիծն ու աղտերը շու- ղան = սողան, երևին, լուրին՝ չուրջը, վրան:

Հ. Գ. Ա. Նահապետեան աքի աղտը քանձր համարելով լողալ ենթադրութիւնը կը մերժէ: Բայց երբ աքը միշտ խոնաւ է և ինչ որ մէջն իրայ կամ գոյանայ կը թրջի և յարատե կարծման հետեանքով կը տարուբերուի՝ ինչո՞ւ հակառակիլ չողայուն:

Ըստ այսմ անհաւանական չէ հոս ալ Նորայրի անդադարձութիւնը շ ի և ղ ի վրիպակաւ փո- փոխութեան մասին (Հայկ. Բն. 69):

Իսկ հետաքրքրութեան և կարծիքի և մեկնութեան արտաուցութեան համար կը յիշեմ նաեւ մրարիկ շողայցիկի մրարքն շողալու իցնել (!) սրբագրութեան առաջարկը Մարիէսի կողմէն. Պրոֆ. Ադոնց ալ կ'անկարելի համոզուի. ներուի ըսել որ շատ ծիծաղական և անտեղի առաջար- կութիւն մ'է, և աւելորդ ու և է քննութիւն կամ հերքումն: (Revue des études Arm. etc. 1925. էջ 175):

էջ. տող.	էջ. տող.	
12 4 զգոյնեւոր	18 զգոյնեւոր	
6 նահանջէր	21 նահանջէր	նահանջէր (տողամիտումը = նահանջէր)
7 դամենեան	22 դամենեան	դամենեան
12-16 զկենդանութիւնն	17 8 զկենդանութիւն	
18 զստամանին	10 զստամանին	
19 զերրջակն	11 զերրջակն	զերրջակն (տողամիտումը = խորշակն)
20 նա աշաւարի	13 նա աշաւարի	
12-13 21-4 երկվորաց	14-22 երկվորաց	երկվորաց
23 ի ցամաքութենէ և	16 ի ցամաքութենէ և	յիւր և

Վերջին խօսքը մ'ալ մրարին ի նպաստ որ ըստ մեզ բուական համոզիչ է և խնդիրը այլևս լուծուած կարելի է նկատել, և այն՝ Ս. Բարսեղի վէցորէից (տպ. Վին. 1830, էջ 115) մէկ վկայութենէն որ արդէն կարծեմ իբրեւ ազգիւր ուսումնասիրուած է. «Ջի (լուսին) յորժամ յստակ և պարզ և վճիտ երեւեցի, գոյտակ պարզոյ յայտ առնէ. և յորժամ ի մահիկ եղջերսն զնշանակ կարմրուածեան կամ զբրարորդիւն ունիցի՝ մթնութիւն...»

Այս վկայութենէն ունինք համեմատութիւն մը Բարսեղի և Եղնիկի ըսածներուն

յստակ = յստակիչ (միտ)

պարզ = ի բաց պարզիչ (զպտն և զբիժ)

մրարորդիւն = մրարքն.

և ստուգել զեղեցիկ չէ՝ նմանութիւնը լուսինի և աչքին. նոյն պատկերն է, նոյն մանրամասնութիւններով, բաց ի դիրքէն և իրէն և տեսակէտէն:

7, 2. — Եւրոս Ի ԳՈՐԾԵ ԵՒ Ի ԳՈՐԾԵ ՋՄ. տպ.ը ունի «Լէյին ի լոյսն ի գոյ» որ ուղիղ ձեւը կը թուի և ըստ իս Բարս. տպ.ի մէջ վրիպակ մը սպրդած է, քանի որ ՋՄ-ի վրան սրբազանուած է (Բա. գրատունիէն անշուշտ) այսպէս «Եկին ի լոյսն և ի գոյն ի գոյ». արդեօք սխալմամբ դրուած է ի գոյն. Թերևս ԱՃ. կը լուծ իր համեմատութեանց և սրբազանութեանց կարգին և այդ է որ մեզ համար քիչ մը զարմանալի կը ծնայ. Հ. Գ. Վ. Նահանգապետեան ալ սրբազանուած է իր կարգին, որ ինչպէս ըսինք, ուղիղ ձեւն ըլլալու է:

7, 8. — ԺԱՄԱՆԱՅԵՆԵՆԵԱՆ ԵՍՈՒՄԱՆԱՆԸ Բայերը գոյութիւն ունին ՋՄ. տպ.ի մէջ, ուսկից և Բարս.ի մէջ. յայտնի է որ կարեւոր պակասը կը լրացնեն ԱՃ-Գ. Տ. Մ-ի ձեռագրին, և անգամ մ'ալ կը հաստատեն թէ ԱՃ-Գ. Տ. Մ-ի ձեռագիրը չէ բնագիր ՋՄ.-Բարս.ի, այլ ուրիշ ԶԻՄ մը, ինչպէս կանխելէն ըսինք:

Բայց Մարիէս, միշտ ծուռ նայելով ՋՄ.-Բարս. տպագրութեանց, կ'ըսէ թէ ըստ կամս աւելցուած են այդ երկու բայերը առ հարկի իմաստը լրացնելու Ապացոյց... չկայ. որով մտահոգուելու խնդիր մը չէ: (Revue են. էջ 176).

7, 15. — Ի ՀԱՍՏԱՌԻՒՆ... Ասելը Մարիէս կ'ուզէ սրբազան ի հաստումն «Եւ իւրոց արարածոցն ի հաստումն ըստ իւրաքանչիւր բնութեանց անել» նախադասութեան մէջ, իբրեւ լրման, կոտորելութեան իմաստով:

Փաստ կը պակսի այդ փոփոխութեան համար. այնքան ստիպող հարկ մ'ալ չկայ փոփոխելու:

9, 18. — ԱՐԱՆՏԻ ՄՈՐԱՆՏ. Հ. Գ. Գալէմբեար կ'ուղղէ Արեանց մոզուց. Մարիէս ալ կ'ականարկէ ատոր: Թէպէտ դրական փաստ մը չկայ, սակայն մտածելով որ արանցը այդպէս պարզ՝ իմաստ մը չունի, և յետոյ նախընթաց Գունացն հերանուաց (և արանցն մոզուց) ստուգել՝ Արեանց կը թելադրէ, կարելի է ընդունիլ:

9, 18-10, 4. — Հոս Մարիէս զեղեցիկ անդրադարձութիւն մ'է որ կ'ընէ, կարեւոր պակաս մը լինելով իր հեղինակութեամբ ըստ իմաստին:

Ահա թէ ուր և ինչպէս. «Ապա եթէ ինչ յարարածոց՝ որ զեղեցիկ է՝ այն ի բարւոյ արարչէ՝ հոս կը յաւելու և երբ ինչ յարարածոց՝ որ չար է, այն ի չարի ախարի, կցելով յետոյ նորէն Եղնիկը՝ «կարծիցի ոմանց». եթէ այդ յաւելուածը չընենք կապը կը պակսի յաշնորդ խօսքերուն հետ, «որպէս Գունացն հեթանոսաց և արեանց (արանց?) մոզուց և հերձուածողաց որ չար իմն հուրիւն հակառակ յարաշն ղնեն». և ստուգել գիտենք որ այդ Գոյն հեթանոսներն և արի մոզերն են որ բարի և չար աստուած կը գնէին, ուստի և բարի և չար արարածներ. ինչպէս որ յետոյ ալ պիտի պարզէ երկարութեան կոշտումով. (Revue են էջ 178):

(Հարուստակելի)

Հ. ԵՂԱՍ ՓԵՏԻԿԵԱՆ